

ԷԴՈՒԱՐԴ ԱՎԱԳՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական և
մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ

ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ. ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԵՎ ԶԱՂԱԶԱՅՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում, սահմանադրական բարեփոխումներով պայմանավորված, վերջին տարիներին նկատվում է միջազգային և ներպետական իրավունքի նորմերի մերձեցման միտում: Այդ մերձեցման ճանապարհին զգալի քայլ հանդիսացավ 2005 թվականին Հայաստանի Հանրապետության նոր խմբագրությամբ Սահմանադրության ընդունումը: Արդեն իսկ նախաբանում խոսվում է այն մասին, որ հայ ժողովուրդն ընդունում է Սահմանադրությունը «... հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին»: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածում սահմանում է, որ «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան», իսկ 6-րդ հոդվածով հռչակվում է, որ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, ինչպես նաև ճանաչվում է ՀՀ միջազգային պայմանագրերի առաջնայնությունը ներպետական օրենսդրության նկատմամբ: Կարևոր է ընդգծել, որ նշված նորմերն ամրագրված են որպես սահմանադրական ընդհանուր իրավական սկզբունքներ, որոնք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքներից:

Ի տարբերություն նախկին ՀԽՍՀ Սահմանադրության, այս նորմերը մեր երկրի համար նոր են: Նախկինում խորհրդային օրենսդրությունը տարբեր ակտերում պարունակում էր միայն միջազգային պայմանագրերի հղումային նորմեր և դրանց կիրառման կանոնների մասին հիշեցումներ՝ ներպետական իրավունքի հետ դրանց կոլիզիայի դեպքում: ԽՍՀՄ Սահմանադրության մեջ միջազգային պարտավորությունների կամավոր կերպով

կատարման սկզբունքի առկայությունը կրում էր խիստ ընդհանուր բնույթ, հաշվի չէր առնում միջազգային իրավունքի հետ ՀԽՍՀ իրավունքի հարաբերակցության ընդհանուր հայեցակարգերը: Վերը բերված սահմանադրական նորմերը նոր խթան հաղորդեցին միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության ոլորտում կատարվող հետազոտություններին: Առաջվա պես բաց է մնում այն հարցը, թե միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության հայեցակարգերից որն է Հայաստանի Հանրապետության համար հանդիսանում օպտիմալ: Տվյալ հիմնահարցի առումով գիտնականների և հետազոտողների կարծիքները միանշանակ չեն:

Միջազգային իրավունքի և ներպետական իրավունքի հարաբերակցության և փոխգործակցության բնույթի ճիշտ ըմբռնման համար անհրաժեշտ է դիմել այս հարցի պատմությանը:

Ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցության մասին հարցը ծագել է վերջինիս առաջացման հետ մեկտեղ: Բայց երկարատև ժամանակի ընթացքում այն գիտության պահանջ ներկայացնող հարցերից չէր, ինչը բացատրվում է, նախևառաջ, ներպետական իրավունքի և մինչկապիտալիստական հասարակարգեր ունեցող պետությունների միջազգային հարաբերությունների բնույթով. այդ ժամանակ ի դեմս միապետի՝ կենտրոնացված էր և՛ օրենսդիր իշխանությունը, և՛ միջազգային պայմանագրեր կնքելու իրավունքը: Դա զգալիորեն վերացրել էր օրենքի և պայմանագրի միջև կոլիզիաների առաջացման հնարավորությունը: Սակայն, հիմնախնդիրներ ծագում էին արդեն այն ժամանակ: Այսպես, օրինակ՝ XIV դարում բախում ծագեց Լիտվական իշխանության ներպետական իրավունքի և լիտվական մեծ իշխանի կողմից Իվան III-ի հետ կնքված պայմանագրի մեջ²:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցությունը XIX դարի կեսից սկսել է դիտվել դոկտրինա: Արդեն այդ ժամանակ մշակվել են այդ հարաբերակցության հիմնական սկզբունքները: Դա բացատրվում է նրանով, որ այդ ժամանակ հաստատվում է պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը և տեղի է ունենում էլ ավելի ակտիվ միջպետական գործունեություն:

Իրավագիտությունը միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության հարցի առումով մշակել է երեք հիմնական հայեցակարգեր, որոնց արդիականությունը պահպանվել է ցայսօր: Դրանք են՝ դուալիստական ու մոնիստական տարատեսակները, որոնցում ներպետական իրավունքին վերապահվում է գերակայություն միջազգայինի նկատմամբ, ինչպես նաև երրորդ հայեցակարգը, ըստ որի՝ միջազգային իրավունքը գերակա է ներպետականի նկատմամբ:

Դուալիստական հայեցակարգ: Այս հայեցակարգը ի հայտ է եկել XIX դարի վերջին: Դրա ներկայացուցիչները (գերմանացի Գ.Տրիպելը, իտալացի Դ.Անցիլոտը, անգլիացի Լ.Օպենհեյմը) միջազգային և ներպետական իրավունքը դիտում էին որպես ինքնուրույն իրավական համակարգեր, որոնք վերաբերում են համաստորադասվածության մեջ չգտնվող տարբեր իրավակարգերի: Սկզբում դուալիստական տեսությունը ընդգծում էր ոչ այնքան այդ համակարգերի միջև կապը, որքան դրանց տարբերությունը և անկախությունը:

Համաձայն դուալիստական տեսության՝ միջազգային և ներպետական իրավունքը միմյանցից էապես տարբերվում են, նախևառաջ, դրանցով կարգավորվող հարաբերությունների առումով: Ներքին իրավունքը որոշվում է ինքն իրենով, այն սահմանափակվում է տարածքով և կարգավորում է ընդհանուր իրավահարաբերությունները, որոնք ծագում են պետության ներսում՝ քաղաքացիների միջև կամ պետության և քաղաքացիների միջև: Միջազգային իրավունքը կարգավորում է պետությունների՝ որպես «ժողովրդների ընտանիքի անդամների» միջև հարաբերությունները: Հարկ է նկատել, որ, ըստ այդ հայեցակարգի կողմնակիցների, միջազգային և ներպետական իրավունքները միմյանցից տարբերվում են նաև ըստ աղբյուրների, ընդ որում՝ միջազգային իրավունքի աղբյուրներին պետք է դասել միջազգային սովորույթները, պետությունների կողմից կնքված պայմանագրերը, իսկ ներպետական իրավունքի աղբյուրին՝ «տվյալ պետության սահմաններում զարգացած սովորույթն է և նրա օրենսդիր իշխանության ակտերը»:

Դուալիստական տեսությունը միջազգային

իրավական նորմերի առաջացումը բացատրում է, այսպես կոչված, պետությունների ընդհանուր կամքի առաջացմամբ: Այդ ընդհանուր կամքը դրսևորվում է միջպետական իրավակազմիչ համաձայնագրում: Ելնելով դրանից՝ դուալիստական տեսության ներկայացուցիչները եզրահանգում են, որ միջազգային իրավունքը ո՛չ ամբողջապես, ո՛չ մասնակիորեն չի կարող լինել ներքին իրավունքի մաս: Ներքին իրավունքն օժտված չէ ներպետական իրավունքի նորմեր փոփոխելու կամ ստեղծելու ուժով: Ռուս հայտնի իրավագետ Լ.Ա. Կամարովսկին ընդգծել է. «...պետք է խստիվ սահմանազատել փոխկապակցված բնագավառները՝ պետական և միջազգային. չի կարելի հավանության արժանացնել՝ առանց պետական սկզբունքները միջազգային հարթություն փոխադրելու, ինչպես դա փորձում էր անել լեգիտիզմը, որևէ պետական կարգ առանց միջազգային միջոցներով պաշտպանելու»⁴:

Դուալիզմը հետագայում լայն ճանաչում ստացավ իրավագիտության մեջ: Դրա կողմնակիցները նաև մեր ժամանակներում ևս գտնում են, որ ձևականորեն միջազգային և ներպետական իրավունքները՝ որպես համակարգեր, երբեք չեն կարող հակամարտության (կոնֆլիկտի) մեջ գտնվել: Կարող է տեղի ունենալ որևէ այլ բան, և հենց պետության պարտավորությունների կամ ներքին առումով գործելու՝ ինչպես դա իրենից պահանջում է միջազգային իրավունքը, անկարողումակության բախում (կոնֆլիկտ)⁵:

Սկզբում դուալիզմի հայեցակարգն արտացոլում էր միջազգային և ներքին իրավունքի հարաբերակցությունը, ընդ որում՝ թերագնահատելով երկու համակարգերի փոխկապակցությունը: Պատահական չէ, որ այդ հայեցակարգի կողմնակիցները հաճախ որոնում են այդ թերությունը հաղթահարելու ուղիներ և կոլիզիաները հաղթահարելու միջոցներ: Բուլղարացի իրավաբան Պ. Ռադոյնովն առաջ քաշեց իրատեսական (ռեալիստական) դուալիզմի հայեցակարգը, որին համապատասխան՝ անհրաժեշտ է ելնել նրանից, որ կոլիզիաները, վերջին հաշվով, լուծվում են հօգուտ միջազգային իրավունքի, քանզի այլ մոտեցումը կնշանակի դրա ժխտում⁶:

Խորհրդային, հետևաբար նաև սոցիալիստական երկրների իրավաբանները գտնում էին, որ «դուալիստական տեսությունը բովանդակում է մի շարք դրական հանգամանքներ, քանզի ելնում է պետությունների ինքնիշխանությունն ընդունելուց և արտացոլում է միջազգային հարաբերությունների համաժողովրդավարական բնույթը»⁷:

Այն գիտնականները, ովքեր պաշտպանում

են դուալիստական հայեցակարգը, նշում էին հետևյալը, որ թեև միջազգային և ներպետական իրավունքը իրենից ներկայացնում է երկու ինքնուրույն իրավական համակարգ, դրանք սերտորեն կապված են իրար հետ և անմիջական ազդեցություն են գործում միմյանց վրա: Այդ առումով ուշադրության է արժանի Ե.Տ. Ուսենկոյի տեսակետը, ով նշում է, որ երկու իրավական համակարգերի միջև էլ կապը չի կրում գերիշխման և ենթակայության բնույթ: Այդ կապը բնութագրվում է դրանց փոխգործակցության ոլորտում քննարկվող օբյեկտների համակարգվածությամբ, փոխհամաձայնեցվածությամբ, փոխլրացվածությամբ⁸:

Դուալիզմի ժամանակակից ներկայացուցիչներն ընդունում են այդ նորմերի միջև կոլիզիաների հնարավորությունը, բայց գտնում են, որ այդ հողի վրա պետությունների միջև ծագած հակասությունները և հակամարտությունները կարող են լուծվել վեճերի խաղաղ կարգավորման հիման վրա կամ միջազգային պատասխանատվության օգնությամբ: Այսպես, իրավաբան-միջազգայնագետ Կ. Ռայթը (ԱՄՆ) նկատում է. «Մենք պետք է ընդունենք դուալիստական տեսակետը: Միջազգային դատարանները կիրառում են միջազգային իրավունքը, ազգային դատարանները՝ ազգային իրավունքը»⁹:

Ներկայում սակավաթիվ չեն նաև միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության **մոնիստական հայեցակարգի** կողմնակիցները: «Մոնիստական» հայեցակարգը չի առանձնանում հայացքների միասնականությամբ և ներառում է ներպետական իրավունքի գերակայության տեսության կողմնակիցներին և միջազգային իրավունքի գերակայության կողմնակիցներին: Ավելի մանրամասն քննարկենք դրանցից յուրաքանչյուրը:

Մոնիզմի հայեցակարգի ուղղություններից մեկի համաձայն՝ երկու իրավական համակարգերի հարաբերակցությունը որոշվում է դրանցով կարգավորվող հարաբերությունների փոխգործակցությամբ: Սկզբում միջազգային իրավունքն ազդեցություն չէր գործում ներպետականի վրա: Վճռորոշ էր ազգայինի ազդեցությունը որպես առավել զարգացածի:

Այս հիմնախնդիրն իր վրա ուշադրություն հրավիրեց XIX դարի վերջին և արտահայտվեց «ներպետական իրավունքի գերակայության տեսության» ձևով, ինչը, փաստորեն, միջազգային իրավունքը սահմանում է որպես նորպետական իրավունքի ճյուղ:

Այս տեսության որոշ կողմնակիցներ միջազգային իրավունքը դիտում էին սուկ «արտապետական» իրավունք, որի նորմերն իրավաբանական են հանդիսանում միայն այնքանով, որքանով դրանք ներառված են ազգային իրավունքում: Իրավաբան-միջազգայնագետները (Մարբերգ, Էյխելման, Սիմսոն, Յորն և այլք), պնդելով միջազգային իրավունքի նկատմամբ ներպետական իրավունքի գերակայության տեսությունը, հաստատում էին, որ միջազգային իրավունքի իրավական ուժը կախված է հենց միջազգային հարաբերությանը մասնակից պետությունից: Նրանց կարծիքով, միջազգային իրավունքը դառնում է պետական իրավակարգի մի մասը, որը կարգավորում է այլ պետությունների հետ տվյալ պետության հարաբերությունները¹⁰:

Վերջին ժամանակների ընթացքում հայրենական և արտասահմանյան իրավական գրականության մեջ չի կարելի նշել որևէ ակնառու իրավաբանի հստակ դիրքորոշում, ով հանդես է գալիս ներպետական իրավունքի գերակայության հայեցակարգի կողմնակից: Ընդհակառակը, ներկայում մոնիստական հայեցակարգի կողմնակիցների մեծ մասը պաշտպանում է ներպետական իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի գերակայության վերաբերյալ կարծիքները:

XIX դարի կեսին ներպետական իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի գերակայության հիմնահարցն իրավաբանական գրականության մեջ առանձնացվում էր որպես ինքնուրույն ուղղություն: Այս տեսությունը սուր կերպով բանավիճվում էր XX դարասկզբի իրավաբանական գրականության մեջ: Այդ տեսության առավել հայտնի հետևորդներ են հանդիսանում Կորկունովը, Կազանսկին, Յաշչենկոն, Լե Ֆյուրը, Գուգենհեյմը (Գերմանիա): Տեսությունն առավել լայն տարածում գտավ Անգլիայում և ԱՄՆ-ում:

Բազմաթիվ իրավաբան-միջազգայնագետներ հանդես են գալիս որպես միջազգային իրավունքի գերակայության տեսության կողմնակիցներ, ինչը հաստատում է, որ միջազգային և ներպետական իրավունքում, վերջին հաշվով, կարգավորվում է անհատների վարքագիծը, միայն այն տարբերությամբ, որ միջազգային ոլորտում այդ վարքագծի հետևանքները վերագրվում են պետությանը: Այդ տեսության կողմնակիցները գտնում են, որ միջազգային և ներպետական իրավունքում սուբյեկտների համար՝ անկախ նրանց կամքից, էական են հանդիսանում պարտադիր կարգադրագրերը: Նրանք գտնում են, որ իրավունքի՝ կարծես թե էական տարբերություններ չունեցող երկու համակարգերն էլ պետք է դիտվեն որպես իրավունքի միասնական հայեցակարգի դրսևորումներ:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ազգայինն և կատմամբ միջազգային իրավունքի գերակայության հայեցակարգը ներառում է երկու ուղղություն:

Առաջին՝ **արմատական մոնիզմի** կողմակիցները, հետևելով Քելզենի հայեցակարգին¹¹, ելնում են «բարձրագույն իրավակարգով» (միջազգային իրավունք) և «ենթակա» ազգային իրավակարգերով իրավունքի մեկ համակարգի գոյության սկզբունքից: Քելզենը գտնում էր, որ իրավունքի այդ միասնական համակարգի նորմերը գտնվում են հիերարխիկ (աստիճանակարգային) կախվածության մեջ: «Այդ աստիճանակարգային սանդուղքի ստորին աստիճանները՝ դատարանների և վարչական մարմինների որոշումները, կախված են իրավունքի բոլոր վերադաս նորմերից, վերին աստիճանները՝ միջազգային իրավական նորմերը, կախված չեն ոչ մի իրավաբանական նորմից: Միջազգային իրավունքին հակասող ազգային իրավունքի ցանկացած նորմ հանդիսանում է առաջին միջազգային իրավական առումով, ընդհանրապես գոյություն չունեցող»¹²: Քելզենը ժխտում էր պետական ինքնիշխանության հասկացությունը, քանզի գտնում էր, որ պետությունը կարող է լինել ինքնիշխան միայն այդ բառի բացարձակ իմաստով, այսինքն՝ այն դեպքում, եթե մենք ընդունում ենք ներպետական իրավունքի գերակայության հայեցակարգ:

Երկրորդ՝ **չափավոր մոնիստական** հայեցակարգի կողմակիցները, հետևելով Մսելի տեսակետին, նույնպես առաջնայնությունը տալիս են միջազգային իրավունքի նորմերին: Բայց նրանք չեն գտնում, որ միջազգային իրավունքին հակասող՝ ազգային իրավունքի նորմը հանդիսանում է առաջին: Պետության դերը նրանք տեսնում են նրանում, որպեսզի նպաստի միջազգային իրավունքի նորմերի փոխակերպմանը (իմպլիմենտացիա) երկրի ազգային իրավունքում:

Միջազգային իրավունքը, նրանց կարծիքով, հանդիսանում էր ձևավորված կոլեկտիվի (միջազգային հանրության) իրավունք, անշուշտ, պետական իրավաբանական կարգից վեր: Ընդհանուր առմամբ այն ծառայում է հասարակական շահերին, պետությունների կոլեկտիվին և հանդիսանում որպես միջնորդ տարբեր հասարակարգեր ունեցող պետությունների միջև: Դա նշանակում է, որ պետական իրավաբանական համակարգերը չեն կարող լինել բարձրագույն և ավարտուն, քանի որ պետությունն իր հերթին ևս չի կարող լինել ինքնիշխան¹³:

Չափավոր մոնիստներն ավելի մոտ էին պրակտիկային: Նրանց կարծիքով, միջազգային իրավունքի գերակայության ընդունումը պետու-

թյան համար նշանակում է ինչպես միջազգային իրավունքին և դրա սկզբունքներին ենթարկվել, այնպես էլ ազգային իրավունքի համապատասխանեցում միջազգային իրավունքին:

Ինչպես միջազգային իրավունքի կատմամբ ներպետական իրավունքի գերակայության կողմակիցները, այնպես էլ ազգային իրավունքի կատմամբ միջազգային իրավունքի գերակայության հավատացյալները (արմատական մոնիստներ) միջազգային իրավունքը հակադրում են այնպիսի օբյեկտիվ իրականության, ինչպիսին է պետական ինքնիշխանությունը:

Եթե ներպետական իրավունքի գերակայության կողմակիցների մոտ այդ հակադրումը հանգեցնում է միջազգային իրավունքի ժխտման, ապա արմատական մոնիստների մոտ այն հանգեցնում է ինքնիշխանության մերժման: Բայց պետական ինքնիշխանությունը և միջազգային իրավունքը ենթադրում և լրացնում են միմյանց: Միջազգային իրավունքի՝ ազգայինն և կատմամբ գերակայության կողմակիցները ժխտելով ինքնիշխանությունը՝ իրականում փորձում են միջազգային իրավունքը փոխարինել համաշխարհային պետության իրավունքով, այսինքն՝ ըստ էության, ժխտում են իրականում գոյություն ունեցող միջազգային իրավունքը:

Զննարկվող երկու մոնիստական հայեցակարգերի կողմակիցներն ընդունում են պետական ինքնիշխանության գոյությունը որպես պետությունների անկախություն ոչ միայն միմյանցից, այլև՝ միջազգային իրավունքի նորմերից:

Իրականում ինքնիշխանությունը չի ժխտում պետությունների փոխկախվածությունը, բայց դա չի նշանակում մի պետության ենթարկում մյուսին: Այդ կապակցությամբ հարկ է չհամաձայնել այն կարծիքին, որ միջազգային իրավունքի նորմերի գերակայության ընդունումը և դրանց ներառումն իրավական համակարգում հանգեցնում է պետության ինքնիշխանության սահմանափակման: Պրոֆեսոր Գ.Ի.Տունկինը գրել է. «Երբ մենք խոսում ենք պետությունների ինքնիշխանության մասին, մենք նկատի ունենք ոչ բացարձակ ինքնիշխանությունը (բացարձակ ինքնիշխանություն գոյություն ունենալ չի կարող), այլ ավելի շուտ ինքնիշխանություն՝ միջազգային իրավունքի շրջանակներում»¹⁴:

Պետության և իրավունքի տեսության աղբյուրները հիմնականում մեկնաբանում են ինքնիշխանությունը որպես «երկրի ներսում պետական իշխանության գերակայություն, անկախություն միջազգային ասպարեզում»¹⁵, որպես «բացառիկ, ազգային իրավունք ազատորեն որոշել իր բոլոր գոր-

www.lawinstitute.am

ծերը» և այլն: Վ.Ն. Խրոպանյուկի դասագրքում միջազգային իրավունքը հիշատակվում է ինքնիշխանությունը բնութագրելիս. «Երկրի ներսում և երկրից դուրս ցանկացած այլ իշխանությունների նկատմամբ պետությունների գերակայությունը և անկախությունը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի խստիվ պահպանմամբ»: Բայց այս պարագայում էլ նա ընդգծում է, որ «միայն պետական իշխանության որոշումներն են տարածվում տվյալ երկրի ողջ բնակչության և հասարակական կազմակերպությունների վրա»¹⁶ :

Ժամանակակից միջազգային հարաբերություններում (սկսած Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից) մի շարք գիտնականների կողմից պետական ինքնիշխանության նկատմամբ միջազգային իրավունքի գերակայության ընդունումը կապված է նրանց կողմից պետական ինքնիշխանությունից լիովին հրաժարվելու և համաշխարհային պետության ու համաշխարհային իրավունքի ստեղծման գաղափարների առաջադրման հետ:

Այսպես, ամերիկյան գիտնականներ Մ. Մակդուգալը և Մ. Ռայզմանը գրում են, որ գիտատեխնիկական առաջընթացի արդյունքում մարդկությունը շարժվում է դեպի ավելի սերտ կապերը¹⁷ : Պետությունները դեռևս մնում են համաշխարհային ասպարեզում, բայց աճում է կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների դերը: Ընդ որում, միջազգային ասպարեզում գլխավոր գործող անձինք են դառնում ֆիզիկական անձինք: Այդ պայմաններում, ամերիկյան գիտնականների կարծիքով, անհրաժեշտ է ստեղծել համաշխարհային պետություն, որը կհետապնդի երկակի նպատակ. հանրնդիանուր իրավակարգի կազմավորում՝ մարդու իրավունքների ապահովման և համաշխարհային ամբողջատիրական պետության ստեղծման փորձերը խափանելու համար: Պետք է ասել, որ այդ գիտնականներն ընդհանուր առմամբ, ճիշտ են նախանշել համաշխարհային հանրության զարգացման որոշ միտումներ: Սակայն, համաշխարհային իրավունքի և համապատասխան պետության ստեղծման տեսլականը ուտոպիական բնույթ է կրում՝ պայմանավորված այն հիմնավորմամբ, որ ժամանակակից միջազգային հարաբերություններում այդպիսի ամբողջատիրական պետության մասին վաղ է խոսել՝ կապված տարբեր քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային արժեքներ կրելու հանգամանքների հետ:

Չի կարելի ուշադրության չարժանացնել նաև այսօրվա դրությամբ արդիական մնացող ռուս իրավաբան Պ.Ե. Կազանսկու արտահայտությունը. «Ներպետական իրավունքը չի կարող հակասել մի-

ջազգայինին: Պետությունը պարտավոր է ոչ միայն բարոյապես, այլ նաև իրավաբանորեն իր ներքին կարգերը համաձայնեցնել իր ստանձնած պարտավորություններին: Միջազգային իրավունքը պետք է կատարելի լինի: Երկրի ներքին իրավունքը դրա հետ համաձայնության մեջ է գտնվում, թե չի գտնվում, դա միջազգային իրավական տեսակետից նշանակություն չունի»¹⁸ :

Այսօրվա դրությամբ միջազգային իրավունքի առաջնայնության օգտին արտահայտվող հիմնական գործոններն են. առաջին՝ քաղաքական բնույթի գործոնը. երկրորդ՝ տնտեսական բնույթի գործոնը՝ արտադրության միջազգայնացումը, աշխատանքի միջազգային բաժանումը, համաշխարհային շուկայի գոյացումը. երրորդ՝ աշխարհաքաղաքական (գլոբալ) հիմնախնդիրները՝ տնտեսական ճգնաժամերը, ժողովրդագրական ճգնաժամերը, զարգացող երկրներում պարենային ռեսուրսների պակասը, բնակարանային ճգնաժամը, համաճարակները, բնածին և տեխնածին աղետները, միջազգային հանցավորությունը՝ այս ամենն սպառնում է համաշխարհային իրավակարգի կայունությանը:

Չի կարելի չհամաձայնել այն կարծիքին, որ միջազգային իրավունքին է պատկանում առաջնայնությունն այնպիսի գործոնների թվում, որոնք ներգործում են միջազգային հարաբերությունների վրա, որ «քաղաքակրթության և իրավագիտակցության այսօրվա մակարդակին ամենից ավելի է համապատասխանում միջազգային հարաբերությունների վրա ազդող բազմաթիվ գործոնների թվում միջազգային իրավունքի գերակայության մասին դրույթը»¹⁹ :

Երկար ժամանակ խորհրդային իրավաբանները ժխտում էին ներպետական իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի գերակայությունը և պաշտպանում էին դուալիստական հայեցակարգը: Դա կապված էր այն բանի հետ, որ խորհրդային ժամանակաշրջանում, «սառը պատերազմի» պայմաններում, պետական ինքնիշխանության դոկտրինան վահան էր արտաքին ճնշման դեմ և դուալիզմի տեսությունը պաշտպանելու գործոններից մեկը: Այնուամենայնիվ, ավելի ուշ ընդունվեց ներքին իրավունքում միջազգային կանոնների մասնակի իմպլեմենտացիայի անխուսափելիությունը: Այդ նպատակով օգտագործվում էին հղում կատարող նորմերը՝ որոշ օրենքներ հղումներ էին կատարում միջազգային պայմանագրերին: Մեծ նշանակություն ուներ խորհրդային օրենսդրության մեջ այն նորմերի տարածումը, որոնք սահմանում էին, որ, եթե միջազգային պայմանագիրը բո-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վանդակում է այլ կանոն, քան օրենքը, ապա կիրառվում է միջազգային պայմանագրի կանոնը:

Ինքնիշխանության հիմնախնդրի քննարկումը չի կարող կատարվել առանց պետությունների միջև ձևավորվող հարաբերությունների վերլուծության: Ցանկացած պետություն համագործակցում է այլ պետությունների հետ և, ընդ որում, չի կարող չղեկավարվել փոխադարձ ընդունելի պայմաններով, ավելի հաճախ՝ ամրագրված միջազգային իրավունքի նորմերում: Ինքնիշխան պետությունների շահերի փոխառնչակցության պայմաններում, միջազգային իրավական կարգավորման ոլորտը մշտապես ընդարձակվում է: Պետությունն «անազատ» է իր գործողություններում, եթե միայն այն չի որոշում ինքնամեկուսանալ և դրանով իսկ իր քաղաքացիներին մեկուսացնել շրջապատող աշխարհից²⁰: Բայց այժմ դա անհնարին է առանց ավելի վաղ հիշատակված՝ մարդու իրավունքների մասին միջազգային դաշնագրերով սահմանված՝ մարդու իրավունքների ու ազատությունների էական խախտման, որոնք երաշխավորում են, անկախ պետական սահմաններից, մի ամբողջ շարք իրավունքներ:

Ներկայում արտասահմանյան և հայ իրավական գրականության մեջ առավել տարածված է մոնիստական հայեցակարգի այնպիսի տարատեսակ, ինչպես հանրաճանաչ նորմերի և միջազգային իրավունքի սկզբունքների ու միջազգային պայմանագրերի ճանաչումը որպես երկրի իրավական համակարգի, ազգային իրավունքի կամ երկրի օրենսդրության մաս:

Որոշ պետություններ այդ հայեցակարգին վերաբերվում են խիստ զուսպ և նույնիսկ առարկում են այն: Ուստի միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի նախագիծը պատրաստելիս ՄԱԿ-ի հատուկ կոմիտեն մերժեց դրա տեքստում այն դրույթի տեքստը ներառելու առաջարկությունը, ըստ որի՝ պետության ինքնիշխանությունն ստորադաս է միջազգային իրավունքի գերակայությանը²¹: Այդուհանդերձ, ակնհայտ է ներքին իրավունքում միջազգային իրավունքի կարգադրագրերի առավել լիարժեք արտացոլման միտումը:

ՀՀ Սահմանադրության մեջ (6-րդ հոդվածի 4-րդ մաս) իր արտացոլումն է գտել այն գաղափարը, որը բնորոշ է Եվրոպայի պետությունների ժամանակակից սահմանադրությունների համար: Օրինակ՝ ԳԳՀ Սահմանադրությունում (Հիմնական օրենքում) ամրագրված է. «Միջազգային իրավունքի ընդհանուր նորմերը հանդիսանում են դաշնության իրավունքի բաղկացուցիչ մասը: Դրանք առաջնայնություն ունեն օրենքների նկատմամբ և

անմիջականորեն ստեղծում են իրավունքներ ու պարտականություններ դաշնային տարածքի բնակչության համար» (հոդվ.25)²²:

Համաձայն Հունաստանի Սահմանադրության 28-րդ հոդվածի 1-ին կետի՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը, ինչպես նաև միջազգային պայմանագրերը՝ դրանց վավերացումից և ուժի մեջ մտնելուց հետո, «հանդիսանում են հունական ներքին իրավունքի բաղկացուցիչ մասը»²³:

Բուլղարիայի Սահմանադրության 5-րդ հոդվածի 4-րդ մասը հայտարարում է սահմանադրական կարգով վավերացված, հրապարակված և ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերը «երկրի ներքին իրավունքի մասը»:

Իսպանիայի Սահմանադրությունը հռչակել է, որ օրինականորեն կնքված և Իսպանիայում պաշտոնապես հրապարակված միջազգային պայմանագրերը կազմում են նրա ներքին օրենսդրության մասը: Դրանց դրույթները կարող են չեղյալ հայտարարվել, փոփոխվել կամ կասեցվել միայն ինքնին պայմանագրերում նշված կարգով կամ միջազգային իրավունքի ընդհանուր նորմերին համապատասխան (հոդվ. 96/1)²⁴: Նման դրույթներ պարունակվում են մի շարք այլ երկրների սահմանադրություններում:

Միջազգային իրավունքի գերակայության հարաճուն դերի ընդունումը, ինչն իր արտահայտումն է գտել բազմաթիվ պետությունների սահմանադրություններում և օրենսդրությունում, չի նշանակում, որ ներպետական իրավական համակարգը փոխարինվում է համաշխարհային եզակի իրավական համակարգով: Միջազգային իրավունքի մեկնաբանությունն էլ պետք է կայանա ազգային իրավական նորմերը մեր պետության համար պարտադիր միջազգային համաձայնագրերին համապատասխանեցնելու, և ներպետական իրավունքը միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի հետ համաձայնեցնելու անհրաժեշտության հարցում: Գերակայությունը չի նշանակում մի համակարգի ստորադասումը մյուսին, այլ կանխորոշում է երկու իրավական համակարգերի փոխհարաբերության բնույթը:

Անառարկելի է մնում այն սկզբունքը, համաձայն որի՝ պետությունն իր ինքնիշխանության ուժով ազատորեն ընտրում է իր քաղաքական, սոցիալական և մշակութային համակարգը, ինչպես նաև սահմանում օրենքներ: Պետության ինքնիշխանությունն իր արտահայտությունն է գտնում նաև այն հատուկ կարգավիճակում, որով օժտված է Սահմանադրությունը:

www.lawinstitute.am

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Սահմանադրությունը ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունվող օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին: Այդ հոդվածի ուժով՝ ոչ մի իրավական նորմ, այդ թվում՝ նաև միջազգային պարտավորություններից բխող, չպետք է հակասի Սահմանադրությանը: Այդ կանոնը բնորոշ է ինչպես հին սահմանադրություններին, այնպիսին, ինչպիսին ԱՄՆ Սահմանադրությունն է, այնպես էլ նորերին, այնպիսին, օրինակ, ինչպիսին է 1958 թվականի Ֆրանսիայի Սահմանադրությունը:

Ամբազրելով պետության իրավունքը՝ որոշել իր իրավական համակարգը, միջազգային իրավունքը, դրա հետ մեկտեղ, պետության այդ իրավունքն իրականացնելիս անհրաժեշտ է, որ օրենքներ սահմանելու իրավունքը համապատասխանեցվի իրենց իսկ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին: Իրավական համակարգը որոշելու իրավունքը ներառում է նաև պետական մակարդակում միջազգային նորմերի իրացման ապահովման մեթոդներն ընտրելու իրավունքը:

Միջազգային պարտավորությանը հակասող օրենքի կամ ներքին իրավունքի նորմատիվ ակտի հրապարակումը կարող է այլ պետությունների կողմից բողոքի, հակազդող միջոցների ձեռնարկման հիմք հանդիսանալ: Որպես օրինակ կարող է ծառայել Ռուսաստանի Դաշնության Պետական դոմայնի դաշնային ժողովի 1994 թվականի հուլիսի 6-ի հայտարարությունը՝ կապված Լատվիայում «Զադաքսիության մասին» օրենքի ընդունման հետ²⁵:

«Պետություն և իրավունք» եզրույթը բովանդակում է արտաքին աշխարհի հետ երկրի փոխգործակցության կարգավորման գլխավոր բաղկացուցիչ կառուցակարգերը: Ներպետական հասարակական կյանքում միջազգային հարաբերությունների և դրանց ազդեցության դերի մեծացումը հանգեցնում է նրան, որ ազգային իրավական համակարգերն առավելապես կառուցվում են միջազգային իրավունքի պահանջները հաշվի առնելով²⁶:

Քննարկելով միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության հարցը՝ պետք է նշել նաև միջազգային և ներպետական իրավունքի փոխգործակցության առանձնահատուկ դեպքերի մասին: Այդ առումով առավել հատկանշական է Եվրոպական Միությունը: Այս պարագայում հարկ

է նշել, որ միջազգային իրավունքի հետ Եվրոպական համայնքի իրավունքի հարաբերակցությունը շատ առումներով կառուցվում է այն նույն հիմքերի վրա, ինչը որ միջազգային իրավունքի հետ ներպետական իրավունքի հարաբերակցությունը: Այլ կերպ ասած՝ խոսքը վերաբերում է Եվրոպական Միության իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի գերակայությանը:

Առանձնահատկությունը կայանում է նրանում, որ միջազգային իրավունքի մասն Եվրոպական Միության իրավունքի ձևավորումը հիմնականում հիմնվում է պետությունների շահերի հաշվեկշռման վրա: Ուստի, այդ իրավունքն ավելի մոտ է գտնվում միջազգային իրավունքին, քան ներպետական իրավունքը, որը ելնում է, նախևառաջ, ազգային շահերից:

Տարածված է այն տեսակետը, որ Եվրոպական Միության իրավունքը մի կողմից, առաջվա պես, մնում է ընդհանուր միջազգային իրավունքի մի մասը (հիմնականում այն ուժով, որ դրա առաջացումը խարսխվում է մի շարք միջպետական համաձայնագրերի վրա): Դրա հետ մեկտեղ, այն դիտվում է նաև որպես Եվրոպական Միության մասնակից պետություններից յուրաքանչյուրի ներքին իրավունքի անքակտելի մաս²⁷:

Եվրոպական Միության իրավունքը գոյություն ունի մասնակից պետությունների ներքին ազգային իրավունքի հետ մեկտեղ: Հետագա դատական պրակտիկայի վրա հսկայական ազդեցություն ունեցած իր վճիռներից մեկում Եվրոպական համայնքների դատարանն ընդգծել է, որ. «... ի տարբերություն սովորական միջազգային պայմանագրերի, Եվրոպական համայնքի հիմնման մասին պայմանագիրն ստեղծեց իր սեփական իրավական համակարգը, որը դարձավ մասնակից պետությունների իրավական համակարգերի անքակտելի մասը, և որն այդ պետությունների ազգային դատարանների կողմից կիրառման համար պարտադիր է»²⁸:

Ի տարբերություն ավանդական միջազգային կազմակերպությունների իրավունքի, որի հիմնական նշանակությունն է ինքնին այդ կազմակերպության ներկազմակերպական գործունեության կարգավորումը և իրականացումը, Եվրոպական Միության իրավունքը կոչված է ապահովելու Եվրոպական Միության մեջ մտնող առանձին պետությունների միջև ինտեգրման գործընթացների զարգացումը: Դրա ուժով այն օժտված է մի շարք յուրահատուկ հատկանիշներով, որոնցից հիմնականն են հետևյալները.

ա) Եվրոպական Միության իրավունքն

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

առաջնայնություն ունի անդամ պետությունների ազգային իրավունքի նկատմամբ,

բ) դրա որոշ դրույթներ օժտված են կարծես թե «միջանցիկ» գործողությամբ և պարտադիր են ոչ միայն անդամակցող պետությունների համար, այլ նաև նրանց ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար:

Եվրոպական ինտեգրման ավելի քան չորս տասնամյակների ընթացքում այդ հատկանիշները վերաճել են Եվրոպական Միության իրավունքի հիմնարար սկզբունքների, որոնց թվում են.

1) անդամ պետությունների ներքին ազգային իրավունքի նկատմամբ Եվրոպական Միության իրավունքի գերակայության սկզբունքը,

2) անդամ պետությունների տարածքում Եվրոպական Միության իրավունքի նորմերի անմիջական գործողության սկզբունքը:

Եվրոպական Միության անդամ պետությունների կողմից այս սկզբունքների պահպանումն ապահովվում է բավականին գործուն մեխանիզմով: Դրանք իրենց արտացոլումն են գտել ԵՀ-ի հիմնադիր փաստաթղթերում: Բացի այդ, գոյություն ունի Եվրոպական Միության արդարադատության դատարանը, որի գործողությունը հիմնված է Եվրոպական Միության անդամ պետությունների, ինստիտուտների, մասնակից երկրների տարածքում ապրող և տնտեսավարող քաղաքացիների ու իրավաբանական անձանց կողմից իրավունքների աաշտպանության հայցային ձևի ընդունման վրա:

Այն կարգը, որի պարագայում Եվրոպական Միության իրավունքը գերակայություն ունի ազգային իրավունքի նկատմամբ, իր արտացոլումն է գտել մասնակից երկրների սահմանադրական իրավունքում: Օրինակ՝ Գ-Ղ-Ն Սահմանադրությունը 24-րդ հոդվածում սահմանում է, որ դաշնությունը կարող է օրենսդրական ճանապարհով իր ինքնիշխան իրավունքները փոխանցել միջպետական հաստատություններին:

Հարկ է նշել, որ Եվրոպական Միության իրավունքի գերակայության սկզբունքի նկատմամբ վերաբերմունքը տարբեր մասնակից պետություններում ոչ այնքան միանշանակ էր: Որոշ երկրներում, օրինակ՝ Պորտուգալիայում, Իսպանիայում, Նիդեռլանդներում, Լյուքսեմբուրգում, Հունաստանում, այս սկզբունքն ազգային իրավական համակարգերի կողմից ընդունվեց բավական արագ: Սակայն, մի շարք այլ երկրներում (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Դանիա, Իռլանդիա, Իտալիա) այդ գործընթացն անցավ զգալի դժվարություններով: Այսպես օրինակ՝ Գերմանիայի և Իտալիայի սահմանադ-

րական դատարաններն ընդհանրապես սկզբում հրաժարվեցին այն ընդունել: Տարիներ պահանջվեցին, նույնիսկ տասնամյակներ, որպեսզի Եվրոպական Միության իրավունքի գերակայության դոկտրինան վերջնականապես ընդունվեր, առանց բացառության, Եվրոպական համայնքի բոլոր մասնակից պետությունների կողմից:

Հաշվի առնելով սավաճը՝ անհրաժեշտ է նշել, որ այսօր պետությունները հազիվ թե զուտ նախապատվությունը տալիս են աշխատանքում քննարկվող որևէ տեսական հայեցակետի: Սակայն, անտարակույս է, որ պետությունների պաշտոնական դիրքորոշման վրա այս կամ այն հայեցակարգի ընտրությունը լուրջ ազդեցություն է գործում: Դա ազդում է ներպետական իրավունքում միջազգային իրավունքի նորմերի իրացման, միջոցների և ձևերի վրա, պետության ներքին իրավական համակարգում միջազգային իրավունքի նորմերի իրացման մեխանիզմների ձևավորման վրա: Բացի այդ, հայեցակարգի ընտրության հարցում պետության դիրքորոշումը ազդում է ներպետական իրավունքում միջազգային պայմանագրի իրավաբանական ուժի վրա:

Պետք է համաձայնել այն կարծիքին, որ միջազգային հարաբերությունների զարգացման ժամանակակից փուլում «տեղի է ունենում երկու իրավական համակարգերի փոխգործակցության խորացում» (միջազգային և ներպետական), «այլ ոչ թե դրանց միջև սահմանների վերացում»²⁹: Անհրաժեշտ է նշել, որ միջազգային իրավական համակարգն ավելի չեզոքություն ապահովող երևույթ է, քան մշտապես փոփոխվող ներքին իրավունքը, միջազգային իրավական նորմերի ներառումը ներպետական իրավական համակարգ՝ վերջինիս կհարողի մեծ կայունություն:

Ժամանակակից միջազգային իրավունքի զարգացման գործընթացում նկատվում է ներպետական և միջազգային իրավունքի հարաբերական փոփոխման կայուն միտում: Դրանց փոխգործակցության մակարդակը մշտապես բարձրանում է: Միջազգային իրավունքի հաշվառումն անհրաժեշտ է դարձել ազգային իրավունքի բնականոն գործառնության համար:

Այդուհանդերձ, այսօր միջազգային իրավունքի նախապատվելի նշանակության սկզբունքին հետևելը տարբեր պետությունների արդեն գոյություն ունեցող իրավական նորմերի փոխգործակցության գործընթացում հանդես է գալիս որպես խաղաղության ապահովման և պետությունների միջև համագործակցության երաշխիքներից մեկը:

Ինչպես այն դեպքում, երբ իրավական համակարգն առաջնորդվում է միջազգային և ներպատական իրավունքի հարաբերակցության մոնիստական հայեցակարգով, այնպես էլ այն դեպքում, երբ այն առաջնորդվում է դուալիստական հայեցակարգով, պետք է լուծել միևնույն հիմնահարցերը: Դա պետության տարածքում միջազգային իրավունքի նորմերը գործողության մեջ դնելու հիմնահարցն է:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը և նրա կողմից՝ միջազգային իրավունքի՝ ազգային իրավունքի (մասնավորապես սահմանադրական) հետ հարաբերակցության որևէ օպտիմալ հայեցակարգի ընտրությանը, ապա այս պարագայում կարելի է խոսել սույն պարագրաֆում քննարկված հիմնական հայեցարգերի որոշ գույքադրման մասին: Մի կողմից, պետք է համաձայնել դուալիստական հայեցակարգի դրույթներին առ այն, որ միջազգային իրավական համակարգը և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգն ինքնուրույն երևույթներ են: Այսպես, վերլուծելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասում պարունակվող՝ միջազգային իրավական նորմերի առաջնայնության վերաբերյալ նորմը, պետք է հաշվի առնել, որ Հայաստանը չի կարող ստանձնել պարտավորություններ և կնքել պայմանագրեր, որոնք կհակասեն նրա Սահմանադրությանը: Հակառակ դեպքում դրանք չեն վավերացվի: Ուստի, ազգային իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի որևէ բացարձակ առաջնայնության մասին չի կարող խոսք լինել:

Մյուս կողմից, ՀՀ Սահմանադրությունը հիշատակված հոդվածում միջազգային պայմանագրերը հռչակել է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Այս դրույթը տեղավորվում է մոնիստական հայեցակարգի շրջանակներում:

ՀՀ Սահմանադրության մեջ հատուկ տեղ են զբաղեցնում մարդու և քաղաքացու իրավունքներին ու ազատություններին նվիրված նորմերը: Եվ այստեղ, ինչպես ներկայացվում է, պետք է նշել միջազգային իրավունքի նորմերի գերակայության վերաբերյալ մոնիստական հայեցակարգի առավել մեծ ազդեցությունը:

Առաջին՝ միջազգային իրավունքի բազմաթիվ հանրաճանաչ նորմեր, նվիրված մարդու իրավունքներին, հանդիսանում են ինքնաիրագործելի և անմիջականորեն գործող, այսինքն՝ դրանք չեն պահանջում ինչ-որ ներքին ակտի ընդունում: Այսպես, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պետությունն ապահովում է

մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան», իսկ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ. «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Դրանից հետևում է, որ հենց ՀՀ Սահմանադրությունը ինքնին չի կարող սահմանափակել հանրաճանաչ իրավունքներն ու ազատությունները, որոնց հիմնական աղբյուրը միջազգային իրավունքն է:

Երկրորդ՝ ՀՀ Սահմանադրությունը նախատեսել է տրամադրվող իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջազգային իրավական մեխանիզմի (կառուցակարգի) օգտագործման հնարավորությունը: Այսպես, Սահմանադրության 18-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված է յուրաքանչյուրի իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին: Դրանով Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գերադաս իրավագրությունը: Դա վկայում է ինքնիշխանության որոշակի սահմանափակման մասին և հանդիսանում է միջազգային ու ազգային իրավունքի հարաբերակցության մոնիստական հայեցակարգի հատկանիշ³⁰:

Արդյունքում՝ հարկ է նշել, որ վերը բերված բոլոր հայեցակարգերն առաջացել են ոչ պատահականորեն, դրանք արտացոլում են այս կամ այն պետության՝ իրականում գոյություն ունեցող շահերը: Նույնիսկ կարելի է դիտարկել որոշակի ընդհանուր միտում՝ միջազգային իրավունքի առաջնայնության կողմնակիցներն ավելի հաճախ ներկայացնում են ուժեղ պետության շահերը, որը երկարատև ժամանակաշրջանի ընթացքում զգալի ազդեցություն է ունեցել միջազգային իրավունքի զարգացման վրա: Ազգային իրավունքի առաջնայնության տեսությունն առաջ են քաշել գերմանական իրավաբանները՝ XIX դարի վերջին և XX դարի սկզբին, երբ Գերմանիան արագորեն ուժեղ էր կուտակում, իսկ նրա միջազգային դիրքերն ավելի թույլ էին, քան մյուս պետություններինը: Այստեղից էլ բխում է դոկտրինան՝ ուղղված պետության կողմից կնքված պայմանագրերից հրաժարվելուն: Դուալիստական հայեցակարգն սկզբնապես մշակել են նվազ ազդեցիկ երկրների ներկայացուցիչ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

գիտնականները: Ուստի, չպետք է բացարձակա-
նացնել հայեցակարգերից և՛ ոչ մեկը՝ դրանք բոլորն
էլ կախված են ուժերի քաղաքական դրվածքից:
Կցանկանալիս ընդգծել, որ ժամանակակից փու-
լում մոնիստական-դուալիստական հիմնախնդիրն
առավելապես ձեռք է բերում սոսկ զուտ տեսական
բնույթ: Պրակտիկայում, անկախ նրանից, թե հայե-
ցակարգերից որն է պաշտպանվում, անհրաժեշտ է
լուծել միևնույն հարցերը: Դրանք են՝ երկրի տա-
րածքում միջազգային նորմերը գործողության մեջ

դնելու, միջազգային իրավական նորմերի իրակա-
նացման հուսալի կառուցակարգի ստեղծման, ինչ-
պես նաև ներպետական և միջազգային իրավունքի
նորմերի կոլիզիաների կանխման և լուծման հար-
ցերը:

¹ Տե՛ս Вылегжанин П.Н. Нормы международного права обисходных линиях //Государство и право, 2012.№5. С. 80-82; Миронов Н.В. Соотношение международного договора и внутригосударственного закона // տե՛ս Вылегжанин П.Н. Нормы международного права обисходных линиях //Государство и право, 2012.№5. С. 80-82; Миронов Н.В. Соотношение международного договора и внутригосударственного закона // Советский ежегодник международного права, 1965. С. 68.

² Տե՛ս Грабарь В.Э. Материалы по истории литературы международного права в России.-М., 1958. С. 20.

³ Տե՛ս Հարկ է նշել, որ այս տեսակետի կողմնակիցներ էին նաև հայտնի իրավագետներ՝ Է.Մ.Ամետիստովը, Բ.Գ. Բուսկևիչը, Ա.Ս. Գավերդովսկին, Ե.Տ. Ուսենկոն, Ս.Վ. Չեռնիչենկոն և այլք:

⁴ Տե՛ս Камаровский Л.А. Основные вопросы науки международного права. - М.,1892. С. 45.

⁵ Տե՛ս Այդալիսի կարծիք է հայտնել բրիտանացի իրավագետ Ջ.Ֆիցմորիսիսան, տե՛ս Futzmaurice J. The general principles of International Law // Степкин Е.Ю. Соотношение норм конституционного права России и международного права. Дисс. канд. юрид. наук, М., 2004. С. 80.

⁶ Տե՛ս Радойнов П. Проблемы международного права. - София, 1984.

⁷ Տե՛ս Блищенко И.П. Международное и внутригосударственное право. - М., 1960. С. 15.

⁸ Տե՛ս Усенко Е.Т. Соотношение и взаимодействие международного и национального права и Российская N2. С. 14.

⁹ Տե՛ս Մեջբերումը կատարված է՝ Каланда В.А. О трансформации норм международного права в правовую систему РФ // МЖМП. 1994. N3. С. 48.

¹⁰ Տե՛ս, օրինակ՝ Zom A. Girundzuges volkerrechts. - Leipzig, 1903. S. 7 // Терешкова В.В. Применение норм международного права в судебной системе Российской Федерации. Дисс. канд. юр. наук. - Казань, 1998. С. 44.

¹¹ Տե՛ս Kelsen. General Theory of Law. - Cambrigde, 1945; Principles of International Law.-New York, 1967 // Суворова В.Я. Реализация норм международного права. - Екатеринбург, 1999.

¹² Տե՛ս Буткевич В.Г. Соотношение внутригосударственного и международного права.- Киев, 1981. С. 25.

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 52:

¹⁴ Տե՛ս Тункин Г.И. Международное право. - М., 1999. С. 10.

¹⁵ Տե՛ս Теория государства и права. Академический курс / Под ред. М.Н. Марченко.Т.1.-М., 1998. С. 98.

¹⁶ Տե՛ս Хропанюк В.Н. Теория государства и права. - М., 1997. С. 334.

¹⁷ Տե՛ս Մեջբերում կատարվել է մենագրությունից, տե՛ս Карташкин В.А. Права человека: международная защита в условиях глобализации. - М., 2009. С. 8-9.

¹⁸ Տե՛ս Казанский П.Е. Введение в курс международного права. - Одесса, 1901. С. 53// Суворова В.Я. Реализация норм международного права. - Екатеринбург, 1999.

¹⁹ Տե՛ս Смирнова Е.С. О проблеме взаимодействия норм международного и конституционного права без иллюзий / Конституционализм: идеал и/или реальность. -М., МГЮА, 2012. С. 237-238.

²⁰ Տե՛ս Крылов Б.С., Ильинский И.П., Михалева Н.А. Проблемы суверенитета в Российской Федерации. М.,1994. С. 35:

²¹ Տե՛ս Док. ООН А6230. 1966. 27 июля. С. 232.

²² Տե՛ս Конституции государств Европейского Союза. - М., 1999. С. 189.

²³ Տե՛ս նույն տեղը, էջ 255:

²⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 392:

²⁵ Տե՛ս Лукашук И.И. Нормы международного права в правовой системе России. - М., 1997. С. 11.

²⁶ Տե՛ս Лукашук И.И. дународное право // Московский журнал международного права. 1995. N 2. С. 48.

²⁷ Տե՛ս Топорнин Б.Н. Европейские сообщества: право и институты. - М., 1992. С. 38.

²⁸ St'ú Costav. ENEL Case [1964] // European Court Reports 585 // Тихомиров Ю.А. Глобализация: взаимовлияние внутреннего и международного права. // Журнал российского права, N11, ноябрь, 2002. С. 31.

²⁹ St'ú Лукашук И.И. Глобализация, государство, право 21 век - М.: Спарк. 2000. С. 20.

³⁰ St'ú Պետության ազգային ինքնիշխանության սահմանափակման մասին է վկայում մասն Մարդու իրավունքների եվրոպական դատարանում քննության ընդունված գործը «Վոնստանտին Մարկինը ընդդեմ Ռուսաստանի»:
Սանրանան տե՛ս Лапаева В. Дело Константина Маркина против России в контексте проблемы национального суверенитета // Сравнительное конституционное обозрение. N2. 2012. С. 77-84.

РЕЗЮМЕ

Основные концепции соотношения внутригосударственного и межгосударственного права.

Характер и значение в сфере защиты прав человека

Таким образом, обобщая тему концепции соотношения внутригосударственного и межгосударственного права в сфере защиты прав человека можем свидетельствовать, что исторический и международный правовой опыт подчеркивают важность выполнения международных обязательств для правовой системы государства, в том числе в сфере личных прав и свобод человека. Это достигается взаимодействием внутригосударственного и международного права, в частности, через структуры, включающие направления и формы.

SUMMARY

The main concepts of correlation of domestic and international law.

Essenss and meaning in the field of human rights protection.

Thus, summing up the topic of the concepts of correlation of domestic and international law in the field of human rights protection, we can state, that the historical and international legal experience puts high emphasis on fulfillment of international obligations for the legal system of the given country, including in the field of personal rights and freedoms of the people. It is acquired by cooperation of domestic and international law, particularly, through mechanisms involving the directions and forms.